

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԷՋԵՐ ՀԱՅ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Ա

ԱՇՈՒՂ ՂՈՒԼ ԹԱԴԵՈՍ

Հայ աշուղական բանաստեղծութեան այն պայծառ դէմքերից մէկն է Ղուլ Թադէոսը, որի յօրինած ոտանաւորները հարբատացրել են գուսանական երգարուեստի դանձարանը: Չնայած այդ հանգամանքին, Հայ աշուղական գրականութեան պատմութեան մէջ նրա անունը մինչև օրս էլ չի յիշատակուած, մնացել է նա անյայտ ու անծանօթ եւ համարեալ մոռացուել է:

Նա ապրել եւ սակղծագործել է ԺԹ դարի առաջին շրջանում: Իս այն պատմաչբբջանն է, երբ Հայ աշուղական արուեստի զիրքերում Հետզհետէ փայլել են նորանոր աշուղներ եւ իրենց ստեղծագործութիւններով բարձր պահել Հայ գուսանական գրականութեան մշակոյթի դրօշը:

Թէ ի՞նչ պատկեր են ներկայացնում վաստակաւոր աշուղի կենսագրութեան եւ հասարակական գործունէութեան հիմնական էջերը, գծրախտարար փաստական հարուստ տեղեկութիւններ յունենք: Այսքանը միայն յայտնի է, որ նա իր դարաշրջանի այն լուսաւոր, առաջադէմ գուսաններից մէկն է, որ իր ամբողջ կեանքը նուիրել է Հայ աշուղական արուեստին եւ զեղջուկ ժողովրդին: Այդ ժողովրդի համար էլ նա երգեր է յօրինել, եղանակներ կերտել եւ երգել է ու նուագել: Երկար տարիներ թափառել է նա Գարաբաղագի եւ Նախիջևանի հայաբնակ ու թրքաբնակ դիւղերը եւ իր շօնուրբի ու սաղի նորր նուագածութեամբ եւ իր քնարական ինքնուրոյն երգերով շուտով դրաւել ժողովրդի սէրն ու համակրանքը:

Աշուղ Իմբանի վկայութեամբ՝ Ղուլ Թադէոսը Հայ աշուղական գրականութեան

աւանդ է թողել մի շարք երգեր, որոնցով նա պատկերել է իր քնարական յոյզերը, տրամադրութիւններն ու հոգեկան ապրումները: Երգել է նաեւ իր ժամանակի հասարակական կեանքի ուշադրաւ երեւոյթները:

Այդ երգերը հնչել են զեղջուկ ժողովրդի եւ ժամանակի Հայ աշուղների՝ Իմբանի, Աշուղ Նէշտարի եւ այլ գուսանների սողերի վրայ: Հնչել են նաեւ ժողովրդական սօճերի եւ ուրախութիւնների ժամանակ եւ ամէն տեղ էլ տարածուել է աշուղի անունը: Փրսեք գրուած են ժողովրդի խօսակցական բարբառով եւ դրաւիչ են իրենց սուրոյն քնարերգութեամբ, պատկերաւորութեամբ եւ զգացմունքի ջերմութեամբ:

Աշուղի «Դաւթաբաբը գծրախտարար մեղ չի հասել, բայց նրա մի քանի ոտանաւորները ընդօրինակուած են 1870 թուականին, Դարալպաղազի Գարազուի գիւղում գրուած ձեռագիր «Դաւթաբաբում, որը 1930 թուին, Թիֆլիսում, նուիրեց մեզ տաղանդաւոր աշուղ Շերաբեմ – Փրիգոր Տաշանը:

Այդ երգերից ուշադրաւ է ձեռ օր մի գիւղալ տեսնոյ խորագրով ոտանաւորը: Դա իր բովանդակութեամբ մի սիրերգ է, որի մէջ աշուղն արեւելեան դուռեղ երանգաւորումներով եւ վրա պատկերներով երգել է իր ճնաղանի զիւղալի զեղեցիկ յատկութիւնները եւ նրա հիւրասէր ոգին: Ահա երգի պատկերը.

Էս օր ես մի գիւղով(1) տեսոյ,
 Եիստ հագածի բաճ է սիրուծ.
 Զաճ տեսիլով, բաճ յեսիլով՝
 Կանէս բանց տարու սիրուն:

(1). Գիւղեցուի:

Յարաւ, աշուղիս տուեց հաց,
Լենց ծիծաղեց, ինչքա գնաց.
Լոյս երեսին կամար կապած,
Խալերն մարբան(2) է սիրում:

Խալեր ունի հազար(3) Խամամ,
Սիրեցի մրամ բէզումամ(4).
Շովղայ(5) կու տայ արեգակամ,
Երեսն ամմամ է սիրում:

Երեսն ամմամ է լուսով,
Սիրեցի մրամ Խուստով(6).
Գինի տուեց չիմի քառով,
Համ իմն հետ գովղ(7) արա սիրում:

Ջովղ անիլը սիրոյ բամ է,
Յետոյ սերն միարամ է.
Ոսկի մագեր բամին ամմի,
Թամամ գառ(8) մշամ է սիրում:

Ջառ մշամ քելիլը քամամ(9),
Բոյն է սիրում՝ չմարի մամ.
Մոցումը կայ մի չուխտ(10) շամամ(11),
Մազկախտ քոստամ է սիրում:

Մազկախտ քոստամ(12) է քաղն(13),
Բիլլաւ(14), Հս է խափն ամղն.

Թափիթ(15) արա իր օքաղն(16),
Ղուլ(17) անիլով տարա սիրում:

Ղուլ անիլով ինչքա տարա,
Գինի տուեց, չքողեց ծարա.
Ղուլ Թաղէս քափիթ արա,
Էս էլ մի ղովղամ(18) է սիրում:

*Աշուղ Ղուլ Թաղէսը թողել է նաև կը-
րծնական երգեր, որոնք աւելի խրատական
-բարոյական երանգաւորում ունեն:*

*Թէ ո՞ր թուին է վախճանուել աշուղը եւ
ո՞րտեղ է դաժնում նրա դերեղմանը յայտնի
չէ. Սուկայն մի հանդամոնք պարզ է, որ
հաւատարիմ մնալով իր աշուղական վեհ
կոչմանը, միշտ ապրել է ժողովուրդի մէջ
եւ իր երգերով ու իր սաղի նուազածու-
թեամբ նպաստել է զեղըռկ ժողովրդի եւ
Հայ աշուղական արուեստի զարգացմանը:*

*Նրա մի այլ լուսային ծառայութիւնը
կայանում է նրանում, որ ժողովրդի մէջ
վառ է պահել աշուղութեան սէրը, տարա-
ծելով գոռանական երգն ու մեղեդին: Այդ
հանգամանքները շնորհիւ էլ նա այսօր Հայ
աշուղական գրականութեան պատմութեան
մէջ ունի իր ուրոյն էջը:*

Բ

ՏԱՂԱԲԱՆ ՏԷՐ-ԵՍԱՅԻ

*Այս յատկեան խաւարում մնացած տա-
ղտաց-երգիչներին մէկն է Տէր-Եսային,
որի սահղծագործութիւնները մինչև օրս էլ
մնում են փոշիների ներքոյ ընկած ձեռա-
դիր տաղարանների էջերում եւ դեռ չեն
յանձնուել Հայ բանասիրական գրականու-
թեանը:*

*Այս նշանաւոր երգչի արժէքաւոր անտիպ
նոտանաւորները յայտնաբերելու նպատա-
կով՝ պէտք եղած դիմումները կատարե-
ցինք, բայց դժբախտաբար դրական ար-
դիւնք չստացանք: Այժմ այսքանը միայն
պարզ է, որ Տէր-Եսային մէկն է իր ժամա-
նակի տաղանաւոր տաղերգուներից, որը*

- (2). Բուսա:
- (3). Յակնիթ:
- (4). Անյոյս, անտեղեկ:
- (5). Լոյս:
- (6). Փափաք, ցանկութիւն, սէր:
- (7). Ուրախութիւն:
- (8). Ոսկեթիւղ, սեղեղէն:
- (9). Աժբողջ, լրիւ:
- (10). Ջոբր:

- (11). Փոքրիկ հոտուէտ եւ յաղցր սէր:
- (12). Բանջարանոց:
- (13). Ճիւղ, սոս, հարս ու փեսայի կանգնելու
[տեղը:
- (14). Էն Աստուած:
- (15). Հրաւեր:
- (16). Սենեակ:
- (17). Մառոյ, սարուկ:
- (18). Վայելչութիւն, հաճոյք:

մտաւորապէս աւելի բարձր կանգնելով իրեն չընկալաւոր ժողովրդից եւ օժտուած լինելով բանաստեղծական ձիրքերով, իր հիւսած տաղերով ազդել է ժամանակի մարդկանց հոգիներին ու զգացումներին վրայ եւ վայելել նրանց սէրն ու յարգանքը:

Երգիչն ապրել եւ ստեղծագործել է մեզանից մի դար առաջ՝ Իրանի Բեազազ գաւառում: Իս Գարսիաստանի Սպահան նահանգի Հոյսաբնակ գաւառներից մէկն է, ուր ապրել են ժի դարում Շահ-Աբրահիմ ձեռքով տարազարտած գիւղացիութեան բեկորները: Ահա այդ գեղջուկ ժողովրդի Հարազատ գաւառն է ստղաբանը, որ կոչւում է Տէր-Եսայի, ինչպէս ինքը յիշատակել է իր տաղի վերջին տան մէջ.

Տէր Եսայի, յետիդ բաժինն ի՞նչ ունեւ,
Շաղաղաւած աշխարհիս մեզքի հետ ես դու:

Մարդկանց սրտերի տարբեր ապրումները նկարող մի ցայտուն պատկեր է նրա Վանազառ ունեմ՝ խորագրով քնարական տաղը, որ դրուել է մ'չ միայն զեղարուեստական պարզ, անպաճոյճ կառուցութեամբ, այլեւ հոգեբանական հիւստածքով: Այդ անտեսակտից Հայ աշուղական դրակալութեան մէջ մի արժէքաւոր տաղ է:

Ընդգծենք եւ այն, որ երգիչ Տէր-Եսային իր երգին տուել է հին Հայ տաղասացների տաղերի նկարագիրը եւ դուք կարգալիս այն տպաւորութիւնն էք ստանում, որ դա աւելի միջնադարեան մի տաղի մնացորդ է, քան աշուղական ստեղծագործութիւն:

Այնուհը երգիչը դանդաղաւում է իր ճառագելի սրտից, որ օր ու զիշեր տանջում է իրեն, մշտապէս փոխելով իր ներքին աշխարհը, իր հոգեկան արամազրութիւնը: Այսպէս տաղասացի սիրտը մի ժամ քաղցրանում է սառն աղբիւրի պէս, մի ժամ դառնանում, դառնում է լեզի: Մի ժամ ծիծաղում է, մի ժամ լաց լինում: Մի ժամ թեւեր է առնում եւ յարձրանում, շարժեալ դուշի նման, մի ժամ հոգի պէս հանդարտում: Մի ժամ «էրուած խոցի» նման կսկծում, մի ժամ չարանում է, որած նեո դառնում: Եւ այսպէս շարունակ յուզում,

Փեփկելի (Իրան)

աւելի ուժեղ եւ փոթորկուած է երգչի կեանքը: Եւ, կարծես, այդ ծանր կացութիւնից ապաստուելու նպատակով դիմում է իր սրտին եւ պատկերաւոր համեմատութիւններով դանդաղաւում:

Գաճառ ունեմ քեզից իմ ճագի սիրտ,
Մի՞ն ժամ պարտում ես, գառնամ(1) գետ ես դու.
Մի՞ն ժամ էազգրանում ես, մի սառն աղբիւր,
Մի՞ն ժամ դառնանում ես, լեզուի պէս ես դու:

Մի՞ն ժամ ծիծաղում ես, մի ժամ լալում(2) ես.
Մի՞ն ժամ թեւ ես առնում, աշխարհ մամ գայում(3).
Մի՞ն ժամ հարցանալաց չուզար(4) չես տալում.
Մի՞ն ժամ քարոզատար վարդապետ ես դու:

Մի՞ն ժամ բարձրանում ես, սրբաբաց զուշի(5)
պէս,

Մի՞ն ժամ խոմարում ես, համարտ հողի պէս.
Մի՞ն ժամ կսկծում ես, էրուած խոցի պէս,
Մի՞ն ժամ չարանում ես, որած մետ ես դու:

Մի՞ն ժամ պարծեմում ես, սուլքամ ու խամ ես,
Մի՞ն ժամ աշխարհից դու բիզում(6) ես.
Մի՞ն ժամ բաժնում ես, մալք ու դումամ(7) ես.
Մի՞ն ժամ արեգակն լուսնի պէս ես դու:

Զօր ու զիշեր միշտ սամնում ես, բուժ չունեւ,
Ի՞նչ անեմ, որ յախտեմից տուն չունեւ.
Տէր Եսայի՛, յետիդ բաժինն ի՞նչ ունեւ,
Շաղաղաւած աշխարհիս մեզքի հետ ես դու:

Թէ Տէր-Եսային, որպէս երգիչ-տաղասան, հասարակական ի՞նչ դործունէութիւն է ունեցել եւ իր քնարի լարերի վրայ ի՞նչ պիտի բովանդակութեամբ երգեր է հնչեցրել փաստական առեւտայինը դժբախտաբար չկան. այդ էական հարցերը հնարաւոր կը լինի լուսարանել, երբ փոշիներին տակ մընացած տաղարաններից մի գեղեցիկ օր բրեւան կը դան երգչի միւս անտիպ տաղերը:

- (1). Գարնան.
- (2). Լալիս:
- (3). Գայիս:
- (4). Գառախարհ:
- (5). Թոշուն:
- (6). Անտեղեակ:
- (7). Մեզ, մշուշ, ժառաբուզ:

ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ